

ՏԱՃԱՐ



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐԽԱՅՐ ՔԱՆԱԿԱՆ ԿԵՂԵՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 37

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՎԻՆՆԱԿԻ ՄԽԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ. — Հար-
իւրամեայ տարեդարձին առթիւ
ՀՈՐԵԼՈՐ ԿԵԱՆՔ. — Խաչին պարծանքը
ԿՈՅ ԱՍՏՈՒԱԹ. — Դ.
Ըղեղներ
ԹԵԼԱԴՐԻՉ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ. — Խաղաղութեան
խօսքեր
ԿԻԼԻԿԻՅ քահանայական Միութիւնը
ՅՈՒԼԻՈՄ ԵՒ ՊԱՄՓԻԼԻՈՍ. — Առաջին Քրիստոնեա-
ներու ժամանակուան պաճճութիւն (Շար.)
Սփոփանք (քերթուած)
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Անապահով կացութիւն. —
Շաբթուան կարեւոր լուրեր

ԱՐԵԱԿ Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ
ԳՐԻԳՈՐՄ
Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ
ԳԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ
Թրգմ. Անգլիերէնէ
ԿՐԾՆ. ԺՈՂՈՎ. ՀԱԼԷՊԻ
ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ
ԴՊՐԵՎԱՆՔՅԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
գիրմել առ Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեթիքաշ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمنى كايساسنده «داجار» غزتهسى مديرى پاپاس زارماير افندي
Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրուտ
Արսասահմանի համար	» 10 ծրանք
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օղար
Ձեռքէ կը ծախուի պահլը	40 փարա

Հինգ բաժանորդ գանողը իրաւունք ունի մէկ թերթ ձրիստանալու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԻՍԻԿ ԵՆ
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻԴՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐԾԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻՍՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-
րիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեղին Բհնյ. Պողար-
եան
ԱՅԻԾՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէլեան
ԲԱՔԵՐԴ. — Մ. Սանտեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եպս.
Կիւլէտէրեան
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.
Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ. — Տ. Մեսրոպ Բհնյ. Թորոսեան
ԶՄԻՒՌՆԻՍ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ քհնյ. Տ.
Գալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջն. փոխանորդ Տ. Ներսէս
Ա. քհնյ. Վահանեան
ԿԻՐԱՍՈՆ. — Սրապիոն քհնյ. Այլաեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ռակի Բհնյ. Պիպիեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան
ՌԻՇԱՔ. — Յարութիւն քհն. Աստարաղեան
ՊԱՆՏՐՄԱ. ՊԱԼԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մաղլըմեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպիսկ. Կէօմրիւքճեան
ՌՈՒՍՃՈՒՐ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրժ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՈ. — Առաջնորդ Տ. Դէորդ Ծ.
Վրդ. Ասլանեան
ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. փոխանորդ Տ.
Թէօփիլէ Բհնյ. Օտապաչեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բհնյ. Տրէզ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառժա-
պետ Բհնյ. Քիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖՐԷԶՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 37

Վ. Ի. ԵՆՆԱՅԻ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ
(ՀԱՐԻՐԱՄԵԱՅ ՏԱՐԵՒԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ)

Օգոստոս 26/8 սեպտեմբերին Մխիթարեան կրկին Մխարանութեանց կրասեր ճիւղը տօնեց իր Վիէննա հաստատութեան հարկւրամիայ տարեգարձը:

1701ին Մխիթար Կ. Պոլսոյ մէջ հիմը դրաւ իր անուանով ճանչցուած Մխարանութեան, որուն Հայ Ազգին մատուցած ծառայութիւնները այնքան ծանօթ են ու այնքան հոգեկուած, որ անոնց վրայ ծանրանալ աւելորդ պիտի ըլլար:

1717ին Մխիթարեան Մխարանութիւնը իր թափառական կեանքին վերջ կուտար, հաստատուելով Վենետիկ Ս. Ղազարի կղզեակին վրայ, եւ հոնկէ կը սկսէր իրապէս իր արդիւնաւէտ գործունէութիւնը:

1773ին Ս. Ղազարէն խումբ մը միաբաններ բաժնուեցան՝ կարծիքներու անհամաձայնութեան պատճառով, 'ւ. Կոստան հաստատուեցան Թրիէսի, աւստրիական հողի վրայ, ուր Մարիա Թերեզա կայսրուհիին հովանաւորութեան տակ հիմնեցին Մխարանութիւն մը որ նոյնպէս Մխիթարեան կողմէն, Հիմնադրին անունով:

1811ին Մխիթարեանց այս կրասեր ճիւղը կը տեղափոխուէր Վիէննա, եւ կը հաստատուէր հոն վերջնապէս:

Իրենց գործունէութիւնը հոն է որ կը կազմաւորուի եւ կը կազմակերպուի:

Մխիթարեանց այս կրասեր ճիւղը Վիէննայի պէս համալսարհային կեդրոնի մը մէջ կը կրէ նոր ազդեցութիւններ, կը ստանայ նոր ներշնչումներ եւ կը գործէ նոր ուղղութեամբ մը՝ Վիէննա՝ նուազ բանաստեղծական քան զՎենետիկ, աւելի եռուզեռ կեդրոն քան հանդարտիկ Ս. Ղազարը, աւելի գործնական միջավայր քան Ազգիականի թաղուհւոյն գեղեցիկ ճրչնարանը, տարբեր ուղղութեան մը ծնունդ տուաւ:

Վենետիկ՝ յաւելա խառնական երկիր, լաւին ցեղերու ներշնչման տակ պահած է իր հիւրընկալ ամբողջ վրայ ապաստան փնտռած Մխիթարեան հայ կրօնաւորները: Իսկ Վիէննա, գերման քաղաք, աւետանական ցեղերու եւ գերման մտաւորականութեան ուժգին ազդեցութեան տակ պահած է հոն հաստատուած Մխարանութիւնը:

Միայն այս միջավայրի տարբերութիւնը բաւական պիտի ըլլար Մխիթարեան կրկու Մխարանութեանց գործունէութեան մէջ ստեղծելու զգալի տարբերութիւններ:

ևւ ստեղծուեցաւ այդ տարբերութիւնը անխուսափելիօրէն:

Ա.

Իբր զրական մշակներ, երկու տարբեր դպրոց կը ներկայացնեն Մխիթարեան երկու Միաբանութիւնները: Վեհեակեանք մնացին միշտ աւանդապահ, նախանձախնդիր եւ պաշտպան ազգային պատմիչներու պատմութեանը, միշտ խանդավառ հաւատացող գրաբարի վերականգնումին: Աւելի բանաստեղծ, աւելի երասողուն, աւելի դիւրագգած, աւելի ազգայնական, աւելի խանդավառ, — թերեւս լոկ միջավայրին ազդեցութեամբ — արասուրեցին համապատասխան գրականութիւն մը, քիչ քննող սակայն շատ խանդավառող եւ վերացնող:

Եւ ասով նուազ ծառայութիւն չմատուցին սակայն ազգին, արասուրեցիով բանաստեղծական գործեր եւ զուտ գրական հոյակապ հաստիքներ:

Անոնք հայ լեզուն վերականգնեցին, առանց սակայն խտիր դնելու դարաշրջաններու մատենագրական զանազանութիւններու միջեւ: Հայ Պատմութիւնը վերականգնեցին՝ այնպէս ինչպէս որ Հայ պատմիչները կ'աւանդէին մեզի. ժողովրդականացուցին եւ կորուստէ փրկեցին ըստ Նախնեաց գրական երկերը, զանոնք հրատարակութեան տալով աւելի կամ նուազ խնամալ կերպով մը:

Վիէնայի Միաբանութիւնը՝ իր գրական վստահներովը իր երկու հարկեր տարիներէ ի վեր գործող միւս հաստեղծէն շատ ևս կը մնայ, սակայն ինքն իբր նոր ուղղութեան մը ներկայացուցիչը, հայ մտուհնազրական պատմութեան մէջ ունի անփոխարինելի տեղ մը: Վիէնացիք բնական դպրոցին հեղինակն են:

Անոնք զննող, զտող, նրբախզճօրէն եւ մանրակրկիտ կերպով պրպտող, ճշմարտութիւնը ամէն բանէ վեր բռնող, աւանդութիւնները քննելու չվարանող գրականութեան մը հիմնադիրը հանդիսացան, ուղղակի ազդեցութեամբը դիման բանասիրութեան:

Եթէ Վեհեակեցիք հայ լեզուն վերականգնացուցած էին, եւ ամէն ոճ, ամէն ասացուածք, քերականական ամէն սովորական ու զարտուղի ձեւերը ընդգրկած եւ անխտիր գործածած էին, — իբր լեզունին զանազան նրբերանգութիւնները —, Վիէնացիք հոն զրին արտակարգ նրբախզճութիւն մը, լեզուն ուսումնասիրեցին բանասիրօրէն, եւ դարեւու զանազանութիւնը ուսումնասիրելով լեզուն միջոց դարձուցին մատենագրական պրպտումներու եւ քննադատութեան:

1840էն սկսեալ Վիէնացիք էին որ վերականգնեցին Ոսկեդարեան հայերէնը եւ զատորոշեցին յետագայ դարերու լեզուէն: Դարձեալ Վիէնացիք էին որ լեզուաբանական տուիքներու վրայ հիմնւած, առաջին անգամ դիտական-բանասիրական ուսումնասիրութիւններով հաստատեցին աշխարհաբարին գրաբարէն անկախ գոյութիւնը եւ դարերու ընթացքին մէջ կազմակերպութիւնն ու զարգացումը, անոր կենսունակ յարատեւութեան ապահովութիւնը, եւ գրաբարին վերականգնացման անկարելիութիւնը: Հ. Ղեւոնդ Յովնանեան՝ եւ Հ. Արսէն Այսրնեանի «Նախնեաց ռամկօրէն»ը եւ «Բնական քերականութիւն»ը, — երկու իրար լրացնող գործեր, — հոյակապ աշխատութիւններ են, թէ՛ իբր բանասիրական, թէ՛ իբր հետազօտական եւ թէ՛ իբր ապացուցական երկասիրութիւններ, եւ առսնծին պիտի բաւէին հայ աշխարհաբարին անցեալը վերականգնելու եւ ապագան նախատեսելու համար:

Դարձեալ Վիէնացիք առաջինը եղան որ ուսումնասիրեցին Հայոց Պատմութիւնը քննական ոգիով, համեմատելով մեր պատմիչները օտար պատմագիրներու, ժամանակակից տարեգրութեանց, բնահոգի արձանագրութեանց եւ ուրիշ վաւերագիրներու հետ: Այսօր, շնորհիւ այդ ուսումնասիրութեանց, — որոնց առաջին քայլը կ'առնէր Հ. Յովսէփ Դաթրճեան —, նոր պատմութիւն մը ունի հայ ազգը՝ բոլորովին տարբեր անկէ զոր մեզի կ'աւանդէ Մովսէս Խորենացին:

Վիլնյայից՝ 1887էն յետոյ հայ ազգային բանասիրութեան ծառայեցին, հրատարակելով «Հանդէս Ամսօրեայ»-ն, ճշմարտագէտ բանասիրական Հանդէս մը, որ քսան եւ հինգ տարի անթերի կատարած է իր մասնագիտական Հանդէսի դերը, միշտ հայ միտքը հաղորդակից ընելով եւրոպական բանասիրական աշխարհին մէջ լոյս տեսած մասնաւորապէս հայադիտական ուսումնասիրութեանց եւ նա մանաւանդ գերման բանասէրներու լուրջ աշխատութեանց, որոնք առանց «Հանդէս» ին գոյութեան՝ անմատչելի պիտի մնային հայ գրական աշխարհին:

Զուգելով աւելի մանրամասնութեան մէջ մտնել, կրնանք առանց վարանման ըսել թէ Վիլնյայի Մխիթարեանք, թէ եւ քանակով ոչ այնքան ստուար եւ մեծածաւալ երկեր արտադրած են, իսկ որակով իրենց գոյժը անմրցելի է:

Բանասէր մը՝ Ստեփաննոս Մալխասեան՝ կազմած է վիճակագրութիւն մը, որուն համաձայն, Վիլնյայի Մխիթարեանք իրենց հաստատութեան օրէն ի վեր հրատարակած են 400ի չափ գիրքեր, որոնցմէ 50 գիրք հայատառ թուրքերէն են, թրքախօս Հայոց համար եւ կրօնական բովանդակութեամբ, 20 գիրք եւրոպական լեզուներով հայագիտական բովանդակութեամբ, իսկ մնացեալ 330ի չափ գիրքերուն 15 աւ հարիւրը Ազոթագիրքեր են, առանց հաշուելու իրենց տրպագրած Սաղմոսները, Ժամագիրքերը, Աւետարանները, Պատարագամատոյցները, որոնք չեն կրնար մատենագրական աշխատութիւն համարուիլ: Ասկէ զեղչելով նաեւ բազմաթիւ բարոյագիտական նպատակով հրատարակեալ տղայական վէպերը, ինչպէս նաեւ բազմաթիւ գոսազերքերն եւ բառարանները, պիտի տեսնուի թէ շատ համեստ թիւ մը պիտի մնայ իբր գուտ մատենագրական եւ բանասիրական աշխատութիւն, ըլլայ հեղինակութիւն, ըլլայ թարգմանութիւն:

Հարեւրամեայ այս գործունէութիւնը միայն աչքի առջեւ ունենալով, հայ ազգը՝ որուն լեզուին եւ պատմութեան ծա-

ռայած են այնքան եռանդով եւ ոգեւորութեամբ չի կրնար անտարբեր մնալ, եւ մենք կրնանք մեր համակրութիւնը եւ անվերապան խնդակցութիւնը յայտնել, եւ մաղթել որ նոյն եռանդով՝ ուղղութեամբ եւ յարտաւելութեամբ շարունակեն իրենց բեղմնաւոր աշխատութիւնը՝ Հայ ազգին պատմական անցեալը լուսարանելու եւ մատենագրութիւնն ուսումնասիրելու համար:

Բ.

Իբր հանրային գործիչներ, այս երկուսը՝ երէց ու կրտսեր՝ Միաբանութիւնները զարձեւալ տարբեր գետնի վրայ գործած են: Հոս ստիպուած ենք, մեր համակրութիւնները անվերապան աւելով հանդերձ Վենետիկի Մխիթարեանց, վերապան ըլլալ հանդէպ Վիլնյայոց, որոնց գործունէութիւնը շատ քննադատելի է այս տեսակէտով:

Վենետիկցիք ազգայնական եղած են, աւանդապահ, աւելի՛ հայ, եւ ասոր համար 200 տարուան ընթացքին մէջ բազմիցս հաւատաքննական ատեմաներու ենթարկուած են, եւ մինչեւ հիմա Հռոմի խիստ ուշադրութեան տակ կը գտնուին Հակառակ անոր, Վենետիկցիք պահած են իրենց ազգային ինքնուրոյն նկարագիրն եւ անկախութիւնը, միշտ հեռու մնալով Հռոմի ազդեցութենէն եւ ուղղակի միջառնութեան: Հասունէն մինչեւ թէրզեան անցնող յիսուն տարիներուն մէջ Սաղմոս Աղաճի եւ Վենետիկի միաբաններու յարաբերութիւնները ցոյց կուտան թէ ի՞նչ են իրենց զգացումները եւ գաղափարները: Ընդհակառակն՝ Վիլնյայից ուժ ու զօրավիճակ եղած են Հասունի եւ անոր գաղափարակիրներուն, եւ գետ այսօր թէրզեանի հետ քնն փոխանակ անոր դէմ ըլլալու:

Հասունեան պայքարի ատեն գիտէր թէ Աբրաքան եւ Գոլէճեան տնտես տակ այս երկու միաբանութիւններն իրարու հետ ի՞նչպէս պոյքարած են:

Վիլնյայից՝ այլ տնտեսութիւն Գոլէճեանը ամենայնոք չէր մը կատարած են Հասունեան խնդրոյն մէջ: Աւելի հին ժամա-

նակներու մէջ, զոր օրինակ 1820ի «Հրա-
ւէյր սիրոյ»ին խմբագրութեան եւ միաբա-
նական ձեռնարկներուն մէջ Գոլէճեանք
Արքայեաններու՝ այսինքն Վենետիկցիներու
հակառակ եղած են եւ բնաւ չեն մաս-
նակցած այս ձեռնարկին, վասն զի իրենց
մէջ առաջին օրէն կաթողիկոսական իրա-
ւոր հրոսակաւ մոլոտանդութիւնը շատ զօրա-
ւոր եղած է, եւ մինչեւ այսօր տոգ զգա-
ցումով տոգորուած են: Իրենց գրական
գործունէութեան մէջ ալ չեղտուած է այս
մոլոտանդական տրամադրութիւնը, եւ ի-
րենց գրական արտադրութիւններուն մէջ
միշտ արտայայտուած է այս ոգին: Անոնք՝
մղուած իրենց կրօնական կծու եւ թիւու
զգացումներէն՝ յաճախ նախատած են Հայ
ազգին մեծամասնութեան զգացումները,
եւ Հայ ազգային եկեղեցին: Գալթեաններն
եւ Պալճեաններն մինչեւ Գալթեաններն,
այս զգացումը տիրապետած է Վիեննացւոց
գրական երկերուն մէջ, մինչ ի պատիւ
Վենետիկցիներու պէտք է ըսել թէ անոնք
զգուշացած են կրօնական վէճեր արծար-
ծելէ եւ ազգին մեծամասնութեան զգա-
ցումները վիրաւորելէ, առանց դադրելու
կաթողիկոսական:

Վիեննացւոց այլապիտակ միտումնե-
րուն գլխաւոր ապացոյցները կրնան հա-
մարտիլ նաեւ իրենց լատինական տարա-
զով պատարագելը, Վիեննայի մէջ Հայե-
րէն պատարագելէ դադրելը, իրենց ար-
բանօր օտար եպիսկոպոսներէն ձեռնադրու-
թիւն ստանալը, իրենց վանական կանո-
նադրութեան մէջ Հոռոմ տրուած շատ լայն
իրաւատութիւնները, մանաւանդ մինչեւ
հիմա թէրզիանի պէս ապաշնորհ եւ ազ-
գէն մերժուած Պատրիարքի մը համամիտ
գտնուելը:

Այս անակէտով իրենց գործունէու-
թիւնը կը միմայնէ իրենց գրական աշխա-
տութիւններուն մէջ ցոյց տուած քննասի-
րութիւնը, երբ մանաւանդ ի նպաստ կա-
թողիկոսական Պատմութիւնն իսկ խեղա-
թիւրելու կը նկրտին: Վիեննացւոց լա-
տինացման հակամիտումին իրր փաստ կըր-
նայ ցոյց տրուել նաեւ իրենց հովուու-
թեան յանձնուած Հօսեւրուն մէջ սեւ-

նուած լատինական արտակարգ միտու-
մը, եւ իրենց այս հոսանքին դէմ որեւէ
աշխատութիւն չտալը: Վիեննացւոց հո-
գեւոր անսխալութեան նշանակուած են Կեր-
լայի Հայերը, որոնք բոլորովին լատինա-
նալու վրայ են եւ Միթարեան վարդա-
պետները հոն ազգային ոգի արծարծելու
համար բան մը ըրած չունին, այլ այդ
զաղթականութեան միայն աճիւնները ըր-
քելով կը բաւականանան թուրքիոյ մէջ
Չմիւնիոյ Հայոց հովուութիւնն ալ Վիեն-
նացիներու ձեռքը եղած է, եւ չհոն ցաւա-
լի է բոկ թէ ամէն քաղաքներդ ունի
լատինացման խմորը տիրապետող Է:
Ընդհակառակն Վենետիկցիք ուր որ հա-
տատուած են հոն հակառակ արդիւնք մը
առաջ բերած են: Հետեւաբար մենք չպի-
տի կրնանք Միթարեանց այս կրտսեր
ճիւղին հանրային գործունէութիւնը գնա-
հատել, իբր օտարամիտ ու ալլաւորող եւ
Միթարեան անունին անհամապատաս-
խան:

Գ.

Միթարեան երկին Միթարեանութիւն-
ները, կրթական դեմքի վրայ ալ գործած
են, դարձեալ տարբեր ուղղութեամբ:

Վիեննացիք 50 տարիէ ի վեր Կ. Պոլ-
սոյ մէջ կը պահեն Վարժարան մը, ինչ-
պէս նաեւ Իգմիր եւ Այալըն ունին կրթա-
կան Հաստատութիւններ:

Իրենց առում զաստիարակութիւնը
չունի դժբախտաբար Վենետիկեանին զրու-
մը: Իրենց կազմած տիպարները միշտ
զայնական տիպարներ են, թունդ կաթո-
լիկ՝ ինչպէս իրենք, եւ բաւական կապ-
կային ու արտաքին ֆնարակով զարդար-
ուած՝ ինչպէս բոլոր լատին Բաղերաններու
սուած զաստիարակութիւնը:

Վենետիկեանց Կ. Պոլսոյ եւ գաւառ-
ներու, ինչպէս նաեւ Վենետիկի վարժա-
րաններուն մէջ պատրաստուած են այն-
պիսի ուսանողներ, որոնք յաջորդ սե-
րունդներու առաջնորդ հանդիսացած են,
որոնք չունչ, ոգի, կռանդ ներշնչած են
ամբողջ սերունդներու: Վենետիկէն դար-
ձող մասւորականներու խումբ մը, Կ.
Պոլսոյ Հայոց սորվեցուցած է հայ ըլլալ

և Հայ ապրիլ, եւ ամբողջ ազգին ճակատադիրը յեղաշրջած են դրական ու զեղարուեստական կեանք մը ստեղծելով եւ ազգին ներշնչելով նոր զգացումներ, մոգական դաւադանով մը առաջնորդելով ազգը գէպի նոր, անձանօթ եւ խելայելիչ ուղիներ: Վեհեականը Հայ գրականութեան վարպետներ, հայ թատրոնի մշակներ, բանաստեղծներ, վիպասաններ, հրատարակագիրներ, բանասէրներ, ասեղնաբաններ եւայլն պարզեցին ազգին, ամէնքն ալ ազգային զգացումով առցուն: Օտար ծագմամբ Թ. Թերզեանը՝ օրինակի համար կրցան օժտել Հայու սիրտով եւ Հայու մարով, եւ իբր կրթական գործիչներ նաեւ ազգին մատուցին անդին ծառայութիւններ:

Այս տեսակէտով ինչ բրած են Վիէննացիք: Դրեթէ ոչինչ: Իրենց չունեցած զգացումները բնական է թէ չպիտի կարենային ներշնչել իրենց աշակերտներուն:

Թերեւս բարձրագոյն կրթութեան մը չունենալուն համար չեն կրցած որոշ գեր մը կատարել, եւ ասոր համար անքան յանցաւոր չեն, քանի որ չունին նիւթական ան բարդաւած վիճակը, զոր ունեցած են Վեհեականիք, օգտուելով երկու մեծ կտակներէ:

Այս բոլոր իրողութիւններէն հանուած եղբակացութիւնը սա է թէ Վիէննացիք՝ միայն պատմական, մասնագրական, լեզուարտնական աշխատութեանց մէջ իբր նորագոյն գիտական ուղղութեան ներկայացուցիչ եւ իբր ճշմարտախոյզ բանասէրներ, ազգին մատուցած են ամենամեծ ծառայութիւն:

Դարձեալ իբր բանահաւաք մատուցած են մեծ ծառայութիւն, ունին ամենաճոխ հաւաքածոյ մը հայկական գրամուտ, աշխարհի ամենամեծ հաւաքածոն Հայ լրագրողութեան, ամենէն կատարեալ հաւաքածոն հայերէն հրատարակեալ բոլոր հատորներու, եւ բաւական հարուստ հաւաքում մը հայ ձեռագրաց, որոնք չեն ծածկուած «ընդ գրութեան» ինչպէս էջմիածնայ, Երուսաղէմի, Վեհեականի ձեռագրաց հաւաքածոները, այլ հանրութեան փանգ-

թացուած են ընդարձակ ապագրեալ ցուցակով մը, որ կրնայ բանասիրական կոթող մը համարուել:

Այս արդիւնքը, իբր հարիւր տարուան աշխատութիւն, կարծէ որ գնահատուի, եւ կը մաղթենք որ վիեննական Միթարեանք իրենց ապագայ զործունէութեան մէջ, զերծ անցեալին թերութիւններէն, մատնադրապէս մէկ կողմ թողլով իրենց կծու կրօնամոլութիւնները, նուիրուին ուսումնական — բանասիրական աշխատութեանց, ընդգրկելով Այսրենեանի նախաձեռնութեամբ եւ իր իսկ Աբրահայրութեան օրով գծուած ուղղութիւնը, որու միակ ապացոյցն է իր հիմնած «Հանդէս Անտրեան», եւ անոր համար դժուած մասնագիտական ու չեղող ուղղութիւնը:

Վիէննական Միթարեանք Օգոստոս 26 — 8 Սեպտին իրենց Վիէննա հաստատութեան հարիւրամեակին հետ տօնեցին իրենց Աբրահայր Գեր. Գր. Վրդ. Գալքիկեանի քահանայութեան յիսնամեակը Գովրիկեանի գրական անուամբ Յովհաննէս Անեցի, հեղինակն է Թրանսիլվանիոյ անհետացեալ կամ կորսուելու վրայ կող Հայ գաղութին պատմութեանը, որ քանի մը ստուար հատորներով հրատարակուած է:

Իր պաշտօնավարութիւնը՝ իբր Աբրահայր՝ տակաւին նոր է, Այսրենեանի յաջորդին ընտրութիւնը Հոսմի կարգադրութեամբ, յետաձգուած ըլլալով քանի մը տարիներ, եւ Հոսմի ուղղակի միջամտութեամբ Հ. Թոթունեան տեղապահ կարգուած ըլլալով:

Հ. Գովրիկեանի ուղղութեան վրայ գաղափար չունինք՝ գնահատելու համար իր զործունէութիւնը, սակայն ի պատիւ եւ ի յարգանս արդիւնաւէտ Միարանութեան մը, որ իր քուէովը գինքն իրեն զուլի կարգած է, մեր յարգանքն եւ շնորհատրութիւնները կը մատուցանենք եւ կը մաղթենք որ, ինքն ի վիճակի ըլլայ սանձելու տեղի երիտասարդ եւ ասելի անփորձ ուժերու կրօնամոլական եւ ուսուցիչ, եւ յաւերժացնելու (Այսրենեանի գործը, արդիւնաւէտ, ճշմարտախոյզի, ու անմոլար ուղղութեան մը մէջ պահելով Միթարեան յոյժ յարգելի Միարանութիւնը:

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊԾԱՆԻ

ՀԱՅԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ԽԱՉԻՆ ՊԱՐԾԱՆՔԸ

«Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն
ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով
աշխարհ ինձ ի խաչ ելեալ է եւ ես աշխար-
հի: (Գաղ 2. 11:)

(Վարդուան ձաշու, Կիրքէն)

Պօղոս Առաքեալ Գաղատացիներու ուղ-
ղուած իր թուղթով զարմանք յայտնելէ
կտրք անոնց փոփոխամտութեան վրայ,
կը ծանուցանէ թէ իր քարոզած Աւետա-
րանը մարդու գործ չէ, թէ ինք՝ իբրեւ
Քրիստոսի Եկեղեցիին ուխտեալ հաւածիչ՝
բոլորովին տարբեր ճամբայէ մը կ'երթար,
թէ իր նախանձախնդրութիւնը, իբրեւ Հըր-
եայ եւ պաշտպան Հրէական օրէնքներու
եւ հայրենի աւանդութիւններու՝ շատ մեծ
էր, թէ վերջապէս զժուար եղաւ իրեն
խթանի դէմ աքաղել, ու տեղի տուաւ
Աւետարանի միւս գործութեան առջեւ՝ Նսեւ
առաքելական հեղինակութեամբ կը յան-
դիմանէ «անմիտ Գաղատացիներ»ը, հար-
ցընելով. «Օրինա՞ց դործերով առիք Հո-
գին, թէ լսելով եւ հաւատալով»:» կը թե-
լալրէ անոնց՝ հոգիով սկսուած գործ մը
մարմնով չլիերջացնել, կը շեշտէ հաւատ-
քին կարեւորութիւնը՝ արդարաւախ հա-
մար, կ'ըսէ թէ անոնք Քրիստոսով մկր-
տուելով զՔրիստոս հաղած եղան՝ Քրիս-
տոնութեան լայնամիտ անխարականու-
թեան մէջ ոչ Հրեայ, ոչ Յոյն, ոչ ծառայ,
ոչ աղատ, ոչ արու, ոչ էգ գտնուիլը յայ-
տարարելով, կը յորդորէ զանոնք մէկ բը-
լալ Քրիստոս Յիսուսի մէջ: Օրէնքին տա-
ուականութենէն Շնորհքին ազատութեանը
կը հրաժիք գտնենք, կը պատուիրէ թըլ-
փառեալի ու անթլփառի վէճ չյարուցա-
նել, եւ կը յանձնարարէ՝ մինչդեռ ժամա-
նակը ձեռքերնին է բարիք գործելու վեր-
ջապէս մարմնի պարծանքը, այսինքն օ-
րէնքին տառական բժախնդրութիւնը յա-
գեցնելու պարծանքը եւ Շնորհաց պար-
ծանքը կամ խաչին պարծանքը հակադրու-
լով, կը յայտարարէ. «Բայց ես քա՛ւ լիցի
որ պարծենամ, բայց միայն ի խաչ Տեառն

մերոյ Յիսուսի Քրիստոսի», եւ խաչին
սիրոյն, զօրութեան ու մեծութեան իբրեւ
փաստ, Շնորհքի գերազատութեան իբրեւ
ապացոյց, կ'աւելցնէ. «Որով աշխարհ ի
խաչ ելած է ինձ, եւ ես աշխարհի»:»

Առաքեալին այս վսեմ՝ յայտարարու-
թեան մէջ սա երեք զխիտ սր կէտերը ու-
շադրութեան անուկ պէտք է:

Ա. Աշխարհ ի խաչ հասնել. — Առաք-
եալը կը յայտարարէ թէ աշխարհ ի խաչ
ելած է իրեն համար. զարմանալի՜ յայտա-
բարութիւն: Ինչպէս կարելի է խաչել
զաշխարհ, ինչպէս կարելի է անոր մեր
վրայ ունեցած ազդեցութիւնները առ
ոչինչ զրել, անոր հրապոյրները ռանակոխ
ընել: Աշխարհ որ այսչափ չաղուեալ է մեր
հոգիներուն, մեր մարմններուն հետ, կա-
րելի՞ է մեզմէ անջատել ու մէկդի նե-
սել: Եւ ինչո՞ւ խաչել զաշխարհ. անոր
մեղի ընձեռած բոլոր բաները անխտրապէս
խտանելի ու արհամարհելի՞ են: Երբեք: Աշ-
խարհ մեր հոգիներուն ու մարմններուն
համար շատ օգտակար ու բարի բաներ կը
հայթայթէ. յաճախ մեր մարմնը նիւթին
ու նիւթականին հետ սերտօրէն կապակ-
ցեալ է, մեր հոգին մեծցնող կարեւոր վի-
ճակներ ու ազդակներ կան արտաքին աշ-
խարհին մէջ, ու այս կերպով մեր հոգե-
ւոր եւ մարմնաւոր շինութեան մէջ հիմ-
նապէս օգտակար բաներ կան, զորս չենք
կրնար ի խաչ հանել: Առաքեալն ալ ար-
դէն աշխարհի այդ բաները ի խաչ հանել
չի պատուիրեր, այլ այն բաները՝ որոնք
մեզ խաչ պիտի հանէին, մեզ պիտի մա-
հացնէին՝ եթէ մենք արդէն մեռած չըլ-
լայինք անոնց հանդէպ կամաւոր մահուամբ
մը: Այո՛, աշխարհ խաչուած է, մեռած է,
անհրապոյր է հաւատացիալին համար, որ
մարմնաւոր կիրքերու, սին հաճոյքներու եւ
խաբեղատիբ պատրանքներու հետամուտ
չէ, որ դիտէ իր հոգիին ճշմարիտ չահերը,
որ աւելի բարձր սեռակէտներու յառած
է, որ աւելի ազնիւ իտէալներ կը սնու-
ցանէ իր հոգիին խորը: Աշխարհ ի խաչ
ելած է անոնց համար՝ որոնք Առաքեալին
պէս ուխտած են իրենց կեանքները ուրիշ-
ներու փրկութեան նուիրել, ուխտած են

ճշմարտութեան ու աղագրութեան դատին համար զոհուիլ, ուխտած են բարիքն զինուորին ըլլալ եւ բարիքն ձեռքը զօրացընել: Աշխարհ մեռած է անոնց համար՝ ու շոնք իրենք ալ մեռած են անասնական եւ ստորին կիրքերու եանքին, ու յարուածին առած գէպի նոյն եւ սուրբ կեանք մը՝ նոր վայելքներով ու նոր երանութիւններով լիացած: Եւ զաշխարհ ուրիշ կերպով խաչել կարելի չէ՝ եթէ ոչ Քրիստոսի խաչին առջեւ, այն սիրոյ մեծ զօհարանին տոջեւ, ուրկէ միացող սիրոյ մեծ Զոհին առջեւ ամէն անցաւոր ու անարժէք բաներ ինքնին կ'անշքանան ու կը մեռնին:

Բ. Աշխարհի հաւնար խաչուիլ. — Առաքեալին յայտարարութեան մէկ կէտն ալ աս է թէ ինք աշխարհի համար խաչուած է, այսինքն աշխարհի համար մեռած է: Որչափ որ ինք զաշխարհ խաչած է, մեռցուցած է, անոր մէջ իր հոգին հրապուրող բան մը չկայ, այնչափ ալ ինք մեռած, խաչուած է աշխարհի համար: Մեռել մը յարձակումէ կամ սպառնալիքէ, հրապուրէ կամ խաբկանքէ կը վախնայ: Հոս կայ մեծ ճշմարտութիւն մը, որուն սխալ ըմբռնումը մեծ ազդեցութիւն ունի Քրիստոնէութեան բոլոր գարաշրջաններուն մէջ: Շատեր աշխարհի համար խաչուելը, մեռնիլը՝ մարդու իր նիւթական, մարմնական բոլոր պէտքերն ու պահանջներն անտեսել ու զանոնք ոտնակոխ ընել հասկցած են: Մէկ մասն ալ աշխարհատեցութիւն ըմբռնած, ուրիշներ ալ զործունէութեան ու կեանքի աշխարհէն խալաւ հրաժարել մեկնած են, ու այդ կերպով յաճախ անեղանակ շաւիղներու մէջ շուարած: Ո՛չ, Քրիստոնէութիւնը մեր բնական ու մարմնաւոր պէտքերուն չի հակադրուիր, այլ զանոնք արդարապէս ու պատշաճապէս գոհացնել կը պատուիրէ, աշխարհաւեցութեան գէմ՝ սէր, արեւելական սէր կը քարոզէ, ու ծուլութեան, անգործութեան գէմ ալ մեր եւ մեր ընկերին բարեբան համար աշխատիլ կը հրահանայ: Քրիստոնեայ չեն անոնք որ կեանքի կրօնքը իբրեւ մահուան կրօնք կը քա-

րոզեն: Զմոռնանք որ Առաքեալն ալ աշխարհի համար աշուղտ մեռնիլ չի պատուիրեր: Իր անձին օրինակը ասոր պէր՝ ճախօս փաստն է: Աշխարհի համար խաչուած Պօղոսն էր որ այդ մեծ յեղաշրջումները յառաջ բերուէր: Երանելի թէ Քրիստոնէութիւնը միշտ ունենար աղագրութիւններ ու մեռեալներ: Ամէն ալ չենք գիտեր թէ վսեմ նպատակի մը նշան ըլլալով կամաւորապէս կը մեռնին: շատ մը երկրորդական ու անկարեւոր բաներու համար: Ահա Քրիստոնեային կը պահանջուի այս իմաստով խաչուիլ, մեռնիլ աշխարհի համար:

Գ. Խաչին պարծանքը. — Եւ Առաքեալը աշխարհը իրեն համար խաչը եղած, զինք ալ աշխարհի համար խաչուած ու տառապած յայտարարելով, զայտուն կերպով մը կը հակադրէ «մարմնիկն պարծանքն» ու «խաչին պարծանքը»: Կ'ըսէ թէ ինք ուրիշ բանի մը համար քաւ լիցի որ պարծենայ, «բայց միայն ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Մեծ հոգիին մեծ պարծանք: Առաքեալը խաչով միայն կը պարծենայ, որովհետեւ ան փրկեց զաշխարհ, որովհետեւ ան սիրոյ ու անձնութեան արեւելքաբարձ յայտարարութիւնն է, որովհետեւ ան երկրաւոր ու վաղանցիկ բաներէ անբաղդատելիօրէն վերադանդ պարծանքի մեծ առարկան է, որովհետեւ անոր աւետարանած շնորհին մէջ օրէնքին պարծանքը կ'անշքանայ, կը նստամանայ, որովհետեւ խաչն ու Խաչեցեալը վերջապէս պիտի ըլլան աշխարհի միակ ու իսկական պարծանքը: Ուրիշ բոլոր պարծանքներ անցաւոր են ու փուճ, ո՛չ փառք, ո՛չ պատիւ, ո՛չ հոգստութիւն, ո՛չ հանճար, մեծութեան սիրով տոչորող հոգիներու յարմար պարծանքներ չեն: Ամենէն մեծ պարծանքը խաչին պարծանքն է: Եւ զմոռնանք թէ այն ատեն միայն պիտի կարենանք նուիրուիլ այս մեծ սիրոյ պարծանքին՝ երբ աշխարհն ի խաչ հանենք ու խաչուինք աշխարհի համար, որչափ ատեն որ կամքի հզօր ձեռքով մը չենք խղած այն կապերը՝ որոնք աշխարհի կը կապեն մեզ, չենք կրնար խաչի դատին, փրկու-

թեան դատին, սիրոյ դատին, ծառայութեան ու զոհողութեան դատին նուիրուիլ, ու իրաւամբ պարծենալ խաչին պատճառով:

Ընթերցող, այս կերպով ըմբռնած ես զայնսարձ խաչին ու անոր համար խաչուիլը, հրաժարած ես մարմինն պատիր պարծանքներէն, նուիրուելու համար խաչին պատճառովին: Եթէ կրօնքիդ իրական ու իսկական մեծութեան, խաչին սիրոյն մեծութեան հասու չես՝ Բրիտանացի չես: Եթէ ուրիշ պարծանքներու տուած ես հողիդ ու անտեսած խաչին պատճառով՝ չարաչար խաբուած ես: Խաչին հովանին տակ միայն հանգիստ կայ յայնժամ հոգիներու:

ԳՐԻԴՈՐԻՍ

ԿԱՅ ԱՍՏՈՒԱԾ

Դ. (')

Կոյ Աստուած. — Այո՛, ոչ միայն ֆիզիքական տիեզերքի կարգն ու կանոնը կ'ապացուցանէ զայդ, այլ բարոյական աշխարհի բարեկարգութիւնն ալ:

Քանզ, Գերմանացի մեծ փիլիսոփան, կ'ըսէ Փրոֆ. Յ. Ս. Պանքս (Բրիտանական Վարդապետութիւն, հատոր 6րդ, էջ 26) Աստուծոյ մասին բոլոր պատճառաբանութիւնները՝ բարոյական օրէնքի վրայ հիմնելու հաւանած էր: Երկու բան չարունակ իր հիացումը կը գրուէին. — Աստեղադարձը երկինքի ներդաշնակութիւնը եւ բարոյական աշխարհի օրէնքը:

Արդ, ո՞րն է բարոյական աշխարհը: Համառօտիւ պատմելով, ահաւասիկ. — Կատարելապէս զարգացած իւրաքանչիւր մարդու մէջ կը գտնուի կարողութիւն մը կամ ուժ մը, որ խիղճ կը կոչուի: Այս խիղճը խիստ արար կը խօսի արդարութեան եւ իրականացող սրտի խնդիրներու վրայ: Մեզմէ իւրաքանչիւրին կ'ըսէ ան, «Պարտիս, պարտք է ասիկա ընել» կամ, «պարտական չես. պարտք է ասիկա ընել խորշիլ»: Անոր հնազանդիլը՝ գոհունակ զգացում մը կը պատճառէ, անսաստելը՝ ինքնազատապարտութեան զգա-

ցում մը յառաջ կը բերի: Անճառական փորձառութեան գործ է այս: Ամէնքս ալ անոր ճշմարիտ ըլլալը դիտենք: Մեզի հետ ածած է ան մեր ներքը. թէ ի՞նչպէս, մենք չենք կրնար, եւ հարկ չկայ իսկ որ դիտանք: Արդարութեան եւ իրաւունքի զգացում մը կը զգանք մեր հոգիքէ մէջ, որ, ինչպէս Պլեթլըր կ'ըսէ, կ'թէ զօրութիւն ունենար, ինչպէս որ արդարութիւն ունի, բոլոր աշխարհի պիտի իշխէր: Դադարի մը չէ այն, այլ կարողութիւն մը հոգեոյն մէջ: Ան՝ իբրեւ զատաւոր կը նստի մեր բոլոր գործողութեանց վերեւ: Զի կրնար շողորմութիւն կամ կաշառուիլ: Անոր դատաստանութեան հակառակինք կամ ոչ, ան միշտ պիտի խօսի արդարութեան վրայ: Օգոստափառ դատաւոր մը եւ գերագոյն դատարան մը կը պատկերացնէ ան:

Գիտէք թէ ի՞նչպէս կը գործէ: Պարսականութեան մը հանդէպ՝ նամակ մը գրելու, հիւանդի մը այցելելու, սաբանը ընելու, այն ինչ տեղը երթալու անփոյթ կը գտնուինք. բայց տակաւին ան, պարիկի մը պէս կը ստիպէ ձեզ: Զէք կրնար ճողպարիլ անկէ: Յետոյ, ազնիւ յուսահատութեամբ մը կ'երթաք եւ կ'ընէք զայն, ցնծալից գոհունակութեամբ մը ազադակելով. — «հո՛ն, կատարելու է վերջապէս»: Այս է այն վարձատրութիւնը, զոր կուտայ խղճմտանքը իր թելադրութեանց հպատակողներուն:

Կամ, դարձեալ, կը հակասիլք իր հրամաններուն, մեղք մը կը գործէք, թերեւ, դադանի մեղք մը: Ոչ մէկ մարդ կային աչք տեսաւ զայն. բայց, տակաւին զձեզ յանցապարտ եւ թշուառ կ'ըզգաք: Ինչո՞ւ. խղճմտանքը տեսաւ զայն: Խղճմտանքը յանգիմանեց զայն: Ժամանակու ոճրագործ մը ինքզինք ոտակահալութեան յանձնեց, ըսելով. «Այլեւս տեղի երկար չեմ կրնար տուիլ»: Ի՞նչ չի կրնար տուիլ: Ոչ մէկ աչք տեսաւ, ոչ մէկ տխուր լսեց: Ի՞նչ, Խղճմտանք: Այո՛, ան՝ վարձատրութեան խարազան մըն է, այնչափ հաճելի, որպէս թէ հաճոյքի միջոց մ'ըլլար:

(1) Շար. 35րդ. 9իւէն:

Խղճմանը կայ: Բայց ո՞վ զրուս զայն հոն: Ստուգիւ մարդ չգրուս: Ինչո՞ւ ըստ օրինի եւ կանոնի կը գործէ, եւ ոչ թէ այսօր կերպով մը, վաղը ուրիշ կերպով կը գործէ: Այնպէս անսայթաք է, որչէս ժամանակի օրէնքը, եւ այնպէս ճշմարիտ՝ որպէս արեւածագն ու արեւամուտը: Ի՞նչ մականութիւն պիտի տանք ասոր: Մէկ պատահան միայն կայ. եւ սա է թէ միայն Արարիչը հեղինակն է միւսին: Եւ, ուրիշ մը միջոցաւ կեանք, կարողութիւն, իշխանութիւն ունի. — անձնական ու սուրբ Աստուծոյ միջոցաւ, Մէկի մը, որ իր բոլոր ճամբաներուն մէջ ուղիղ ու ճշմարիտ է: Ան՝ (Խիղճը) աշխարհութեամբ կը կառավարէ, քանզի, իր ծագումը Յաւիտեանական Արդարութենէն է: Արդար զատաստաններու մէջ կը բնակի ան՝ որովհետեւ՝ արեւելքի մեծ Դատաւորին եւ բարոյական Օրէնսդիրին ձայնն է: Ան՝ կը դովէ բարին եւ կը դատապարտէ չարը, զի իր հեղինակը յաւիտեանայէս արդար ու բարի է, Բայց, թերեւս, ամենին աւելի իր պաշտօնն է պատմել մեզի թէ, վեհաշուք զատաւորին, ամբողջ երկրի Դատաւորին առջեւ պիտի ելլենք. եւ այսպէս խղճմանքը մեզմէ անձնաւորին կ'ըսէ. — ՊԱՏՐԱՍՏՈՒԷ՝ ԱՍՏՈՒԾՈՅԴ ԱՌՋԵԻ ԵԼԼԵԼՈՒ:

Թարգմ. Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

ԿԵՍԱՐԻՈՅ առաջնորդ ընտրուած է Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Ղեւոնդ Ծ. Վ. Դուրեան, որ սակայն ասկէ առաջ հրաժարած էր ընտրելութենէ, փոխանորդութեան եւ վարչական ժողովոյ մէջ ունեցած պաշտօններուն հետեւանօք:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԷՆ Ազատամարտի կը հեռագրեն թէ դատարանը անպարտ արձակած է Ապոլիւ Վէհապը, որ անցեալ տարի Ս. Սարգիս թաղին մէջ բռնաբարած էր Լուսիկ անուն շայ հարս մը, եւ անցեալ Յունիսին հազիւ կարելի եղած էր ձերբակալել՝ բռնող զիմագրութենէ մը ետքը: Այժմ ազդեցիկ ազգականներու ջնորհիւ ազատ կ'արձակուի:

ԸՂԵՂՆԵՐ

Ըղեղներ կան՝ որոնք սպունդներ են՝ որ ուրիշին հիւթը կը ծծեն. մէկ սեղմումով կը դատարկես զանոնք. — Անոնք միջակներու ըղեղներն են:

Ըղեղներ կան՝ որոնք մագաղաթներ են՝ որոնց վրայ փետրադրիչն է զրած եւ պողպատեայ գրիչը չի կրնար քնջել. զանոնք ժամանակը միայն պիտի եղծանէ. — Կրօնամօշներուն ըղեղներն են:

Ըղեղներ կան՝ որոնք լեղիի պարկիկներ են՝ ծծել ուղողին շրթներուն վրայ ժահրալսյր կը պատռին. — Անոնք չարերուն ըղեղներն են:

Ըղեղներ կան՝ որոնք աղիքներ են. եւ ընդունակ են սաամոքսի մուռնոցը միայն պարունակելու. անոնց մէջ դաղափարը ժանտառնողէ կը վարակուի. — Անոնք «չուկայիկներու եւ խուժաններու ըղեղներն են:

* *

Ըղեղներ կան՝ որոնք աւազակոյտեր են. անձրեւը՝ զար անյապօրէն կը ծծեն՝ Արեւը միայն կրնայ չորցնել. — Անոնք բարեկրօն ըղեղներն են:

Ըղեղներ կան՝ որոնք վստօղամաններ են՝ զոր կայծ մը բաւական է պայթեցնելու, եւ արիւնը բաւական է մարելու. — Անոնք հերաններուն ըղեղներն են:

Ըղեղներ կան՝ որոնք ազամանդներ են. ստանց ուրիշէ մը լոյս ծծելու՝ լոյս կ'արտաբղխեն. անոնք ո՛չ կը ծոխն, ո՛չ կը գծուին, այլ կը փշրին, բայց չեն մարիր. — Անոնք բանաստեղծներուն ըղեղներն են:

Ըղեղներ կան՝ որոնք աշխարհներ են՝ միշտ արեւներու շուրջը դարձող. էակներու լէզէններ կ'ապրեցնեն. իրենց ծոռնը զր սնծանօթ է՝ ինչպէս նաեւ իրենց վախճանը. անոնք Յաւիտեանականութեան կը պատկանին. — Անոնք հանճարներու ըղեղներն են:

Ըղեղ մըն այ կայ՝ զոր միւս ըղեղները կը մերժեն եւ սիրաբ կ'ընդունի, եւ որուն անունը զեռ Սփինքսին բերանն է. — Ա՛յ Աստուծոյ ըղեղն է:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

(Հոդրար)

ԹԵԼԱԳՐԻՉ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԵՐ

Հեռուն մշուշի կապոյտ քուլայ մը կը կախուէր ձիւնապատ լիւնաշղթային երկայնքն ի վեր, եւ աւելի մօտերը եղեւ նազարդ կիրճի մը կանաչ կողերը կ'երեւային, որոնցմէ վար կը խուժէին ջրվէժներ՝ փրփուրէ ժանեակներ հալած։ Բայց դահալէժին գլուխը շինուած խեղճուկ հիւղակի մը ցած ու լայն պատուհանին առջեւը կեցող կին մը գրեթէ անզգայ էր այս տեսարանին հանդէպ։ Ոչ ալ կարծես կը տեսնէր քովը, պատուհանին տօջիւ գրուած մրանները, որոնք ծաղկած էին անուշաքոյր։ Ան կը դիտէր միայն բլրակողմը, ուր գերեզման մը կար եւ բաւական ուրիշներ ալ անոր քով, որոնց կարծես պահպանութիւն կ'ընէին սրածայր եղեւիններս թէեւ անոր մտածումները դէպ ի սրածայր եղեւիններու երկիրը կը սըլանային, բայց ուշադրութիւնը տուած էր իր երկու աղոց ներսի սենեակէն եկող գծաութեան ձայներուն։ Կնոջ մազերուն մէջ հազիւ քանի մը տրծաթ թելեր սպրդած էին, ու աչքերուն մէջ դեռ վառ էր երիտասարդութեան կրակը, բայց անոր դէմքին վրայ կը դժուէր տառապանքնորո համբերողի մը գիմազիծը, ու այդ պահուն ալ դժգոհութիւն մը՝ ներսէն եկող ձայներուն համար։

Կինը անմիջապէս ետին դարձաւ ու երբ կեցած սենեակէն աղոց սենեակը կ'անցնէր, դիւրին էր տեսնել թէ բարեհաւու ու ճկուն կին մըն էր։ Միւս սենեակը անցնելով, դուռին վարագոյրը ձգեց ետեւէն եւ ըսաւ իր աղաքներուն։

— Ասոր չեմ կրնար համբերել, էտուարտ, այս չեմ սիրեր, Լէոն. դուրսը ա'յնչափ դեղեցիկ է. լեռներուն վրայ թեթեւ մը չուշ մը կայ, թռչունները կ'երգեն պուրակին մէջ, օդը բոյրով ու կեանքով զեղուն է, բայց ձեր գծաութեան ձայնը կ'աւրէ այս ամէնը։

Տիկին էլիզի ձայնը կը դողար իր հան-

դարանցնելու ջանքերուն մէջ, երկու պատաններուն քով, սեղանին մօտ կեցաւ, ու արցունքի շիթեր ինկան սյուներէն վար լէտուարտ ելաւ ու մօրը համար աթոռ մը դրաւ, բայց մայրը չտեսնելու դարկաւ։

— Դուք դեռ չէք գիտեր. մարդիկ ալ չեն գիտեր, բայց պատմում ձեզի։ Դուք այն ատեն դեռ չատ պղտիկ մանուկներ էիք։ Տղաքներս, սարվեցէք թէ չատ կերպերով չորը մարդոց սիրտներուն մէջ կը մտնէ ու անոր խաղաղութիւնը կը խոյզէ։ Մեր հայրենի երկրին մէջ, զոր դուք չէք կրնար յիշել, մենք սահմանադրութիւն վրայ կը բնակէինք, ուր կ'սկսէին անպահաս կ'ըլլան։

«Մեր երիտասարդները յաճախ կը մասնակցէին այդ կռիւներուն, եւ երբեմն աւելի տարեցներ ալ կը միանային անոնց։ Ինծի մօտիկ ըրէք, էտուարտ, Լէոն. Առանց ձեր հօր, ես հոս բերի ձեզ։ Մեր հայրենիքի կալուածները ծախեցի ու հոս հաստատուեցայ, ու միշտ կ'ըսէի. «Դոնէ աղաքս հոս իբրեւ սահմանապահ զինուոր գինուորագրուելէ ազատ կ'ըլլան»։ Եւ գիտէի թէ երբ քսանը մէկ տարեկան ըլլաք, ոչ մէկ բան կրնայ փրկել ձեզ զինուոր երթալէ, ինչպէս կ'ընեն ուրիշներ, բայց աւա՛ղ որ ես չեմ դառնար յաճախ կ'ըսէի ինքնիրենս. — Հոս ուրիշ գերեզման մըն ալ չունեցած դոնէ աղաքներս աւելի խաղաղ ու ազատ տեղ մը կը բնակին։

Լէոն ելաւ եւ վեր ու վար կը քալէր սենեակէն մէջ. քիչ մը ետքը մօրը մօտենալով դայն մեղմութեամբ աթոռին վրայ նստեցնել փորձեց ու ըսաւ։

— Մայր, նստէ՛, այս յուզումը չատ ծանր է քեզի համար։

Բայց մայրը աթոռէն նորէն ելաւ։

— Ձեւ կրնար նստիլ, սիրտս անհանդարտ է, ու պիտի ըլլայ, որչափ ատեն որ դուք անհանդարտ ըլլաք ու սիրով չապրիք իրարու հետ։ Ձեր պղտիկութեան ատեն կը խորհէի որ՝ եթէ մեր կալուածները մեզի բաւելու չափ եկամուտ չբերին իսկ, աւելի ապահով երկրի մը մէջ կըրնանք ասոնց գինով նորեր գնել ու աւելի եկամուտ ունենալ, եւ այն ատեն խաղաղ

կ'ապրինք : Տղաքներս , ձեզի չեմ խօսած այն գերեզմանին մասին , որ իմա , որ ձերն ալ է , որ մեր պատուական քաջերէն մէկուն համար փորուեցաւ : Մինչև ուր այդ գերեզմանը փորուեցաւ , ես չառ խորհած չէի մահուան վրայ , բայց այն ասին երկու պզտիկներովս մինակ մնացի կեսանքի ճամբուն վրայ : Այն , այդ գերեզմանը ձեր քով հօր գերեզմանն էր : Անոր մահէն քիչ ետքը կ'իւր վերջացաւ , ու ես յաճախ արցունքով բաժնեմ . — « Ի՞նչ կ'ըլլար եթէ անոր մահէն առաջ վերջանար պոտերազմը ու խաղաղութիւնը զայն ինծի բերէր » : Ու հիմա կ'աղաչեմ ձեզի , աղաքս , հոս մնացէք : Տեսէք , ծովին կապոյտ ջուրերը կը ժպտին կանաչ մարգագետիններուն դէմ , արեւը շափուղայի պէս կը փայլի երկինքէն , մեր նախիրը եւ հօսերը կ'արածին մեր կալուածներուն , սա դիմացի բլուրներուն եւ դաշտերուն վրայ : Եւ մի մոռնաք թէ երբ մեր այս կալուածին մէջ ձեր ուրոյն տուները հաստատէք , այն ասան ալ զբոսոթեան եւ սահմանադրութիւն վէճերու սատանան կրնայ մտնել ձեր սիրտերը : Հիմա ալ կը վիճիք , կը զժախք որ նախիրին ու հօսին արօտափայրերու սահմանները անյարմար են , մէկերնից մէկ տեղ , մէկերնից ուրիշ տեղ մը յարմար կը դառնայ , ու կը հակառակիք իրարու : Բայց մի մոռնաք թէ ձեր այս գծառութիւնով դուք ալ գերեզման մը կը փորէք , ուր պիտի թաղուի եղբայրական սէրը : Այո , միշտ յիշեցէք թէ ձեր հայրը սահմանադրութի ճշման կոխի մը մէջ ինկաւ : Զանազէք այս կարգի վէճեր չունենալ , բայց եթէ ունենաք՝ խաղաղութեամբ կարգադրեցէք զանոնք : »

Տիկին Էլիզ առանց իր զաւակներուն նայելու իր սենեակը դարձաւ , բայց չկըրցաւ մտնել այն սենեակը , ուր կար իր հին հայրենի ստանէն փոխադրած մրանիին թաղարը : Ի՞նչ տխուր յիշատակներ կը բուրէր ան հիմա իր յուզուած սիրտին համար :

Լէոն դեռ վեր վար կը քալէր սենեակին մէջ , էտուարտ սեղանին առջեւ նըս-

տած էր : Բաւական լուծինէ մը ետքը Լէոն էտուարտի դառնողով ըսաւ ,

— Էտուարտ , դուն աղէկ կրնաս առաջնորդել այս տեսակ բաներու մէջ : Մայրը իրաւունք ունի , դուն ուղածիդ պէս կարգադրէ :

Էտուարտ դառն ժպիտով մը ժպտեցաւ ու ինք ալ յուզուեցաւ իր կարգին : Ելաւ պատահանին առջեւ կայնեցաւ , ու խորունկ շունչ մը առնելով ըսաւ ,

— Այո՛ , մայրը մեզ հոս խաղաղութեան , խաղաղ օպրիւրու համար բերաւ : Վախճամ թէ իրաւունք ունի եւ մենք ընկելու վրայ ենք այնպիսի բան մը , որուն վրայ պիտի աւազենք երբ չառ ուշ է :

Դարձաւ ու ձեռքը երկնցուց եղբորը , եւ ան ալ իրենց , եւ աւելցուց .

— Մենք մեր վէճերն ու զժառութիւնները , մեր մօր փափաքին համաձայն խաղաղութեամբ ու օրէնքով պիտի կարգադրենք :

Բաւական տարիներ ետքը Տիկին Էլիզ երբ նորէն իր հիւղակին նոյն պատուհանէն կը նայէր հեռաւոր ձիւնապատ լեռներուն , որոնց վրայ կապոյտ մշուշի թուանքեր կը կախուէին , իր այդ բաց պատահանէն կը լսէր վարի մարգագետինին վրայ ցատկաւոր գառնուկներու հեռ խաղացող իր թոռնիկներուն զուարթ խնդուքները : Գոհունակութեան ժպիտի դարմանալի արեւալոյս մը կը փայլէր դէմքին վրայ ու շնորհակալութեան նայուածք մը կը շողար սեւ աչքերէն : Թէեւ աւելի արծաթ թելեր կային մազերուն մէջ քան այն ատեն՝ երբ նոյն պատահանին առջեւ կայնած ներսը իրարու հետ վիճող ու զժառող իր տղոց ձայները կը լսէր , բայց հիմա դէմքը շատ հանգարտ էր ու դէպի վար նայելով կը տեսներ Լէոնի հիւղակը , որուն ծիանը կը ցցուէր եղեւիններու ընդմէջէն . անդին կը տեսնէր նաեւ Էտուարտի ստանը , ուր ոիրուն մանուկներ կը զբօսէին մարգերուն վրայ , եւ անդիմադրելի յուզումով մը ուռած սիրտով յիշեց իր ալ երբեմնի հայրենական օճախը , ուր վաղամտիկ , քաջ , պաշտելի ամուս-

սինին ոսկորները կը հանգչէին սրածայր եղեւթներու հանդարտ հովանիին տակ, եւ դառնանուշ յուզումի ու շնորհակալութեան արցունքները աչքերուն մէջ, ձեռքերը վեր վերցուց ու մրմնջեց:

— Շնորհակալ եմ քեզմէ, ով երկնաւոր Հայր, որ պատուեցի ու հակառակութեան թշնամին զաւակներուս սիրտերուն մէջ եղբայրական սիրոյ գերեզմանը չփորած, կարողացայ անոնց խաղաղութեան խօսքեր խօսիլ:

(Թարգմ. Անգլ.)

ԿԻԼԿԻՂՅ ՔԱՂԱՆՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Բերկրանօք կը ծանուցանենք Աբթ. քահանայ եղբարց թէ Կիլիկիան Քահանայական-Միութեան անդամակցութեան համար, զուարթ առգերով 13 Օգոստ. թուակիր իր հաւանութեան քուղորդը կա՛նք է Անտիոքի Կաթող. Փոխ. Սրբ. Տ. Վաղարշակ ԲՆ. Ճէրրահան, որուն գործունէութիւնն եւ օրինակելի աշխատասիրութիւնը յամենայնի արդարացիա՛ցած է թեմականաց իր վրայ հիմնած ակնկալութիւնները:

Ի Դիմաց Կրօն. Ժող. Հայոց Հալէպի

Ասեմապիտ

Ասեմապէս

Յովհ. ԲՆ. Էթմէ-Քաթաւն Յրթն. ԲՆ. ՆՍԱՅԵԱՆ

Հալէպ

Ծ. ԽՄԲ. — Կիլիկիոյ հոգեւորապետ լքեալ վիճակը, եւ Հալէպէն այդ առթիւ ուղղուած յուղիչ կոչը, որ հրատարակուեցաւ այս սրահներուն մէջ նախընթաց շարժումն, արժանի են ամէն կարգի ազգայնոց լուրջ ուշադրութեան: Ներկայնա՛մակէն կը տեսնուի թէ Կիլիկիոյ հոգեւորականութիւնը իր ամենատարրական միջոցներով կարելին ի գործ դնել կ'աշխատի. պէտք է օգնութեան փութալ իրեն նիւթապէս ու բարոյապէս:

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (1)

Ը.

Յուլիոսի վրայ եղած բժշկական դարմանն ունեցած էր իր արդիւնքը, կամ լաւ եւս բժիշկին ունեցած խօսակցութիւնն ու տուած խորհուրդներն աղբա՛ծ էին իրեն վրայ: Չգիտէնք, Իրողութիւնն ա՛յն է միայն որ Յուլիոսի առողջութիւնը տեղը եկաւ, եւ քրիստոնէութեան վրայ կազմած իր վերջին դադափարներն յիմարական թուեցան իրեն: Շատ չանցած Տօքոզին հեռացաւ քաղաքէն, եւ Յուլիոս՝ գրեթէ ապաքինած՝ սկսաւ հետեւիլ անոր խորհուրդներուն, վերականգնել իր կեանքը որ յանձնարարուած էր իրեն: Ուսուցիչ մը բռնեց զաւակներուն համար, իրեն վերապահելով անոնց վերին հոգեղութիւնը: Ժամանակին մնացած մասը կը նուիրէր հանրային ծառայութեան, որոնք մեծ յաջողութիւն ապահովեցին իրեն, այնպէս որ շատ չանցած խիստ մեծ աղքեցութիւն ձեռք բերաւ քաղաքին մէջ:

Տարի մը անցաւ այսպէս, եւ բնաւ առիթ չունեցաւ Քրիստոնեաներուն վրայ մտածելու: Օրին մէկը զատական պաշտօն ստացաւ Քրիստոնեաներու քաղաքին մէջ, որ շատ հետեւ չէր իրենէն: Հոռմի կայսեր մէկ ներկայացուցիչը Կիլիկիոյ եկած էր, Քրիստոնէութեան տարածումն արդիւնէն նպատակով: Յուլիոս իմացաւ թէ միջոցներ ձեռք կ'անուրին Քրիստոնեաներուն դէմ, բայց չէր եղծադրեր որ այդ միջոցներն ի գործ պիտի գրուին Պամփիլիոսի գտնուած համայնքին մէջ ալ, հետեւապէս միտքէն չանցաւ թէ առիկայ կրնայ ծանր հետեւանքներ ունենալ Պամփիլիոսի համար ալ:

Օր մը, մինչ քաղաքին պիտաւոր հրապարակէն կ'անցնէր զատարան երթալու համար, մուրացիկ մը, — հաւանաբար օտարական մը — դէպ իր կողմը վաղեցի Յուլիոս ճանչցաւ թէ Պամփիլիոսն էր ան:

(1) Շար. Չնրդ Ժիւլէն սկսեալ:

— Ի՞նչպէս էք, բարեկամս, ըսաւ Պամփիլիոս, իրիտ ստիպողական եւ կարեւոր խնդրանք մը ունիմ ձեզի, բայց չգիտեմ թէ անգութ հալածանքի միջոցին պիտի ուզէ՞ք բարեկամի մը պէս վարուիլ հետս, թէ կը վախնաք որ ձեր զիրքը կը կորսնցնէք, լսելով իմ խնդիրս :

— Ո՛չ մէկէն չեմ վախնար, պատասխանեց Յուլիոս, եւ որպէս զի այս մասին բնաւ տարակոյտ չունենաք, առն կը հրաւիրեմ զձեզ և կրնամ յետաձգել գործերս, ձեզի հետ տեսակցելու եւ ձեռքէս եկած ամէն օգնութիւն ձեզի ընծայելու համար : Օ՛հ, միասին եկուք : որո՞ւնն է այս տղան :

— Իմ զաւակս է :

— Հարցնելս աւելորդ էր. ձեր զիմացութիւնը նկատուած կը անսնեմ գէ՛թքին վրայ, եւ այնքան գեղեցիկ կապոյտ աչքերը անսնելով՝ աւելորդ կը նկատեմ հարցընել թէ ո՞վ է ձեր կինը : Ուրիշ մէկը չի կրնար ըլլալ եթէ ոչ այն սիրուն աղջիկը զոր շատ տարի առաջ տեսայ Տարսոնի մէջ : Ծիշտ նոյն աչքերն ունի զաւակնիդ :

— Կաւ գուշակեցիք, ըսաւ Պամփիլիոս, մեր վերջին տեսակցութենէն քիչ ետքը կինս եղաւ ան :

Երկու բարեկամներն Յուլիոսի առնը գացին, ուր Յուլիոս աղեկն իր կնոջ քով թողուց, եւ Պամփիլիոսը սարաւ իր յարկաբաժինը՝ պերճ կահաւորումով մը զարդարուած՝ որ տանը միւս մասերէն հեռու կը գտնուէր :

— Այստեղ ուզածնուդ պէս կրնաք խօսիլ, ըսաւ Յուլիոս, մեզ մտիկ ընող չըլլար :

— Մտիկ ըլլուելէ չեմ վախնար, ընդհակառակն ձեզի ընելիք խնդրանքս այն չէ որ ձերբակալուած եւ մահուան դատապարտուած քրիստոնեաները չզլխատուին, այլ սա միայն որ թողաւորութիւնը հաւատքի գաւառութիւնն հրապարակաւ ընկու :

Այն տունն Պամփիլիոս պատմեց թէ ի՞նչպէս քրիստոնեաներն իրենց ազատութիւնը կորսնցնելով բռնա նետուած էին : Իրենց երէցը, Սիրիլ, տեղեակ ըլլալով

Պամփիլիոսի եւ Յուլիոսի միջեւ գտնուած բարեկամութեան, զինքը զրկած էր այս խնդրանքն ընելու քրիստոնեաներու ինքնապատ : քրիստոնեաները ազատ արձակուիլ չէին խնդրեր. անոնք պարտականութիւն կը համարէին վկայել քրիստոսի վարդապետութեանց ճշմարտութեան, ուխտուն տարիներու երկար կեանքով մը ըլլայ թէ դժնդակ մահուան մը տառապանքներով : Իրենց համար նշանակութիւն չունէր թէ ի՞նչ կերպով վերջ պիտի գտնէր իրենց կեանքը. մարմնական մահը, որ օր մը չէ օր մը անխուսափելի է, երբեք երկրւոյ չէր ազդեր իրենց, կրնար այդ մահը գալ այսօր կամ յետուն տարի ետքը. բայց կը բազմային որ իրենց կեանքը օգտակար ըլլայ իրենց նմաններուն : Եւ որպէս զի վստահ ըլլան ատոր, պաշտօն յանձնած էին Պամփիլիոսի՝ իրրեւ մասնաւոր շնորհ՝ խնդրել որ իրենց զատաւարութիւնն եւ իրենց զլխատութիւնը կատարուի բազմաթիւ ժողովրդեան առջեւ :

Պամփիլիոսի տարօրինակ խնդրանքը մեծ զարմացումի մասնեց Յուլիոսը, որ խոստացաւ ձեռքէն եկածն ընել, այս խնդրանքին հաստատական պատասխան մը տալ կարենալու համար :

— Իմ միջամտութիւնս խոստացայ, ըսաւ Յուլիոս, ձեզ նկատմամբ ունեցած բարեկամութեանս համար, եւ այն բարութեան զգացումին համար զոր կը յաջողեք միշտ արթնցնել իմ մէջս :

Այսու հանգրիւմ, պարտաւոր կը համարիմ ինքզինքս՝ ըսելու թէ ձեր վարդապետութիւններն եւ սկզբունքները վիստակար արտառուցութիւններ կը նկատեմ : Իրաւունք ունիմ այս կարծիքն յայտնելու, քանի որ փորձը առած եմ : Ես ալ, քիչ ժամանակ առաջ, յուսախաբութեանց եւ հիւանդութեան հետեւանօք յառաջ եկած վնասութեան վայրկեանի մը մէջ, համամիտ գտնուեցայ ձեր հայեցակէտին, այն աստիճան որ նորէն մղուեցայ ամէն բան թողու, ձեր վարդապետութիւնն ընդգրկելու համար : Գիտեմ թէ ո՛րն է առանցքը որուն վրայ կը դառնան բոլոր ձեր սխուլանքները, թէ ո՛րն է ամբողջ ձեր զրու-

թեան անկիւնաքարը. ատիկա արդիւնքն է ինքնասիրութեան, վնասիրտութեան, հիւանդ ուղեղի մը տկարութեան. Քրիստոնէութիւնը թերեւս կը յարմարի կիսերուն, բայց անարժան է էրիկ մարդոց:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ, թէեւ մէկ կողմէ կ'ընդունիք թէ պէշ բնազդներն անբաժան են մարդկային բնութենէն, բայց միւս կողմէ կը մերժէք ճանչնալ ընկերային կազմակերպութիւն մը որ միշտ կը կարենայ զսնոնք զսպել: Ընկերութենէ հեռու կ'ապրիք, բայց կ'օգտուիք անոր լաւ բիւրրէն. մարդկային ճիշդութեւնը դրամապիւսին վրայ լաւ մը չէք աւելցնիր, բայց անկէ կ'ապրիք: Ասիկայ ո՛չ արդար է եւ ոչ բանաւոր. որովհետեւ զբոսնութեան եւ բանութեան մասնաշաղկապները պիտի դադրէր գոյութիւն առնելէ, եթէ ենթարկուած չըլլար կտրու մը օրէնքներու եւ զսպողական միջոցներու, որոնց գործադրութիւնն ստանձնած են կառավարութիւնները: Մեզ նման հասարակներու պարսպանութիւնն է հնազանդիլ այս օրէնքներուն, յարգել կառավարութիւնները, եւ ծառայել պետութեան: Դուք, Քրիստոնեաներդ, փոխանակ իրաց հաստատեալ կարգին պահպանութեան ու պաշտպանութեան մասնակցելու, փոխանակ հասարակաց բարիքին աշխատելու եւ մարդոց մէջ հետզհետէ աւելի բարձր յարգանք մը ձեռք բերել ջանալու, կը յայտարարէք թէ ամէն մարդ հաւասար է: Բայց ասիկա հպարտութեան արդիւնք է, որպէս զի չպարտաւորուիք ձեզմէ դերադաս մարդոց գոյութիւնը խոստովանել, եւ կաշեկալ ինքզինքնիդ Կեանքի հաւասար նկատել: Ասկէ զատ, կը բողոքէք տուրքերու, գերութեան, զատարաններու, զլիապետներու, պատերազմի եւ վերջապէս այն ամէն հաստատութեանց դէմ որ մարդիկ կը միացնեն, եթէ ձեր բոլոր վարդապետութիւնները գործադրուէին, մարդկային ընկերութիւնը պիտի կործանէր անմիջապէս, եւ իր անդամները պիտի դառնային իրենց նախնական բարբարոսութեան:

Պետութեան մը մէջ ապրելով հանդերձ, անոր կործանումը կը քարոզէք, հակառակ որ ձեր գոյութիւնն իսկ այդ Պետութեան կեանքէն կախեալ է: Երբեք չպիտի լսէինք ձեր կամ ձեր եղբայրներուն վրայ խօսուիլը, եթէ Պետութիւնը գոյութիւն չունենար. այն ստեղծեալ բոլորս ալ գերիները պիտի ըլլայինք Սկիւթացիներուն կամ ուրիշ ուրիշ վայրերի ցեղի մը:

«Դուք պալարի մը կը նմանիք, որ մարմինը կը կազմաւորուէ, կ'օճնչայնէ, ինքը այդ մարմինէն ապրելով հանդերձ: Մարմինն ինքզինքը կը պաշտպանէ, եւ ինքը կ'անհետացնէ պալարը: Մենք ալ այսպէ՛ս պիտի վարուինք ձեզի հետ: Ուստի, հակառակ ձեր բաղձանքներու իրագործումին համար օգնելու խոստումին, ձեր վարդապետութիւնները գծուած եւ ծայր աստիճան վտանգաւոր կը նկատեմ: Դձուձ, որովհետեւ ձեզ անուցանող ստիւնքը յօռտեղը վատ դործ մ'է, եւ ճիշդ այս բանը կ'ընէք դուք, օչտուելով Պետութեան ձեզ ընծայած առաւելութիւններէ, եւ ոչ միայն չէք ծառայել անոր, այլ եւ կը ջանաք զայն կործանել:

Պատիւիլիոս որ լինի կ'ունենալէր այս երկարապատում ճառին, անպէս պատասխանէր:

ԼԻՈՆ ԹՈՒՍԹՈՅ

(Շարունակելի)

Տ. ՄԱՐԵՆՆԵՆԻ ԵՊ. Ի ԽԵՂԻՐԸ. — Էջմիածնէն տեղակալ Տ. Գեորգ Եպսկ. Սուրենեանց Պատրիարքարան նոր գիր մը դրիւելով, ուշադրութեան կը հրաւիրէ մերիկա դանտու Տ. Մուշեղ Եպ. Ի նկատմամբ: Պատրիարքարանն ունէ անօրինութիւն ընկու պէտք չի տեսնել այլեւս, քանի որ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսն իր մեծաժողովները գրեթէ այդ մասին էջմիածնի, եւ բացառելով է Տ. Մուշեղ Եպ. Ի Ամերիկա մեղուս պէտքը:

(Բիւզանդիոն)

Ս Փ Ո Փ Ա Ն Ք

Ինձի կ'ըսեն, «սես ինչ ալուուր կը ժպտի Նորափրիք վերազարթնումը կեանքին. Այդուն բացուող վարդերուն մէջ դեռասի Շաղին շողին մումունջին խորն ալեակին»:

Տերեւին մէջ կը հառաչէ ցուրտ քամին. Յօրինելով վիշտ մը խորունկ ու երկայն. Հոգիքս մէջ ուր իղծես կը բռնմին. Բաղդը ծածկեց սեւ մուրին քակ իմ ներկան:

Կ'այրի նակասս արցունքին մէջ հեզասահ Մինչ կը ժպտին գարնան Մայիսն ու Ապրիլ. Բանաստեղծներ, պսամեցեք ինձ քէ կայ ման Ըսեք այլեւ ի՞նչպէս պե՞տ է կեանքն ապրիլ:

Ի՞նչ կայ արդեօք անհունին մէջ, ասդին ծոց, Ըսեք կեանք կա՞յ. ես կը խորհիմ առեղծուած. Կ'ուզեմ ելնել հոն, ուր կ'այրին շողմ ու բոց Ու չ'հիծիմ մեծութեան մէջ, ո՛վ Ասունած:

Վարդերուն մէջ ա՛լ չքափել վշտին սուգ,
Յանգերու մէջ չծրարել ցառապանք
Այլ չեմ ուզեր օճէ քնարն արճառուք
Միայն սրտիս խաչ մը՝ հոգւոյս սփռփաւք:

Դ. ՊՐԵՎԱՆՔՅԻ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱՆԱՊԱՀՈՎ, ԿԱՑՈՒԹԻՒՆ

Պատերազմական վիճակը որ կը տիրէ Թուրքիոյ եւ Իտալիոյ միջեւ, այս վերջնային անորակելի եւ անակնկալ յարձակումովը Ափր. Տրիպոլսոյ վրայ, — ինչպէս ընդարձակօրէն կը պատմեն օրաթերթերը —, առիթ տուած է կառավարութեան, հրահանգ ուղղել ի մէջ այլոց հայաբնակ դաւառները, որպէս զի երկրին ներկայ տագնապի միջոցին արաքոյ կարգի ջանքեր ըլլան խաղաղութեան պահպանման համար: Անհրաժեշտ, ստիպողական եւ շատ ի դէպ է այսպիսի հրաման մը, այն վրդովեալ կացութեան մէջ ուր կը գրանուին մասնաւորապէս երկրին արեւելեան նահանգները: Դաւառային թշնամեցում

թիւններ, մասնաւորապէս Մուշէն եկած նամակներ, կը հաստատեն թէ ո՛չ միայն Խոյթի սպանութեանց հեղինակներն անպատիժ կը պտտին, այլեւ նորանոր սպանութիւններ գործուած են, վիրաւորման, հրձիգութեան դէպքեր եղած են, որոնք ահ ու սարսափի եւ վհատութեան մասնած են հայ ժողովուրդը: Բողէչի կուսակալ Իսմայիլ Հազգը պէյ, որու մասին այնքան գովեստով կը խօսի տեղւոյն եւ ռահդուն առաջնորդը՝ Տ. Սուրէն Ծ. Վ. Դալէմեան, եւ որ Խոյթի ոճրագործները պատժելու համար փափաքած խոտութիւններն ի դորձ դնել չկարենալէն յուսահատելով Պոլիս եկած էր, հրահանգ ստացաւ անմիջապէս պաշտօնատեղին վերադառնալու: Միւթարական է անշուշտ Իսմայիլ Հազգը պէյի նման պարտաճանաչ եւ խղճամիտ պաշտօնեայի մը իր տեղը վերադարձուիլը, բայց ատրկայ բացարձակապէս ապարդիւն պիտի ըլլայ, եթէ չարուի անոր գործելու ազատութիւն, եթէ՝ մանաւանդ՝ ոճրագործներու զսպումին համար անհրաժեշտ զինուորական ուժը չտրամադրուի իրեն: Հազգը փաշայի թոյլ եւ՝ կրնանք ըսել՝ ոչ-բարեացակամ վարչութեանէն ետքը, կազմուած նոր դահլիճը՝ Սաիա փաշայի նախապահութեամբ՝ յուսանք եւ մաղթենք որ աւելի կարուկ միջոցներ ի դորձ կը դնէ անդորութեան համար հայաբնակ նահանգներու մէջ ուր մութ ուժեր կը գործեն՝ յաջողցնելու համար դուշէ հայաջինջ քաղաքականութիւն մը, որ չէր կրցած ի գլուխ ելլել Համիտի բռնապետութեան իսկ օրով: Առաւել քան երբեք ժամանակ է արթուն հակելու, Ազգին բոլոր հատուածներուն եւ կուսակցութիւններուն միջեւ սերտ համաբաշխութիւն մը պահպանելու, միաձուլ, կուսականութեամբ մը վիճակով ազգուկերպով ներկայացնելու մեր ծով ցաւերն ու պահանջները նոր Դահլիճին:

Ն. Սօնիդեօն կ'իմանայ թէ Մուշի Հայերը կը պատրաստուին դադարելու, վասն զի ամբողջ գաւառը լեցուած է աւազակներով:

* Վանէն Սարաճեան Եպ. հետազոտ

է թէ Պարսից սահմանազուլութիւն վրայ սպանութիւններ եւ թալանը սկսած են, աշխրեքները զինուած յարձակում կը դործեն, եւ Սալթա ալ որ վանէն փախած է, սահմանազուլութիւն անցած ըլլալով սկսած է իր հին շահատակութեանց :


Ս. Սղեթի առաջն. Տեղապահ Տ. Գէորգ Վ. կը հեռագրէ Պատրիարքարան թէ «ոճիր եւ թալան սիւղեմագիք կերպով սկսած են Կարճկանի եւ շրջակայից մէջ, կառավարութիւնը ոեւէ ձեռնարկ չընել անդորրութիւնը վրդովողներու գէմ, ժողովուրդը յուսահատած է : Շուտով փրկեցէք մեզ այս վիճակէն» :

Լուրեր կան որ ուս կառավարութիւնը զօրք կը համախմբէ սահմանազուլութիւն վրայ, նախազգուշութեան համար : Միւս կողմէ Միւսաղաշա թերթը կարգ մը զառանցանքներ կը զրէ՝ ուս կառավարութեան տրամադրութեան վրայ, իբր թէ հայկական թագաւորութեան մը կամ քուրդ եւ հայկական ինքնօրինութեան մը մասին : Աւելորդ է ըսել թէ այս տեսակ այլ լնդ այլոց զրոյցներ որչափ գէշ կ'ազդեն թուրք ամբոխին մտայնութեան վրայ, եւ հետեւա չէ որքան ծանր վրասանդի տակ կը գտնուի գաւառի հայ ժողովուրդը :

Դատական նախարարութիւնը, պատերազմական պաշտօնատունէն ստացած անդեկութեան վրայ իմացուցեր է Պատրիարքարան թէ Օսման փաշա հերքած է Մուշի Խապիւղին մէջ իր խօսած ճառով անհարկութիւններ ըրած ըլլալը ազգին դէմ : Եթէ այս է պահանջուած քննութեան արդիւնքը, աւարօրինակ քննութիւն մը պիտի ըլլայ այդ, որ բաւական կը սեպէ ենթակային կողմէ արուած հերքում մը :

Գաբարձութեան թէ Խնամակալութեան վերջնական կամքն է հեռու պահել վարձարտեր կուսակցական ամէն ձգտումներէ : Վարժարանին ինորոյ շինութիւնը, որ ծրագրուած էր, առ այժմ մէկդի թողուած է, մինչեւ որ վարժարանին ներքին վիճակն ապահովիչ եւ հաստատ հիմերու վրայ արուի : Հակառակ պարագային գոցե վարժարանը տեղափոխելու պէտքը ներկայանայ :

ԽԱՌՆ ԺՈՂՈՎՐ ԴՆ. որ մասնաւորապէս զբաղեցաւ հայաբնակ նահանգներու խնդրով, եւ կարգաց վանէն եւ Սղեթէն հասած հեռագրերը, որոնց իմաստը քիչ մը վերը յայտնուած է : Ժողովականներու մեծ մասին կողմէ գիտել տրուեցաւ որ հայաբնակ նահանգներու կացութիւնը գուցէ աւելի ծանրանայ իտալական խնդրէն, ինչ որ եղած է միշտ այս տեսակ պարագաներու մէջ, որով ջարդեր եւն. պատահին Ուստի ստիպուական նկատուեցաւ հայաբնակ նահանգներու ապահովութեան մասին հաւաքական դիմում մը Բ. Դրան, եւ իբրեւան եւ ապահովիչ միջոցներու կիրառիւմը՝ խնդրոյ առարկայ նահանգներուն մէջ : Ժողովը, երկար խորհրդակցութիւնէ ետքը, նկատելով որ դեռ Դաշիճը չէ կազմուած, եւ կարելի չէ հին Դաշիճի անդամներուն զիմում ընել, որոնք միայն խոստումներով օրօրած են ազգը եւ պատճառ եղած նոր երեւոյթներու ստեղծումին, որոշեց նոր Դաշիճին կազմութիւնէն ետքը, Սղեթ ժողովին կողմէ վարչութեան յանձնուած եւ իր կողմէ պատրաստուած յիշատակագիրը ներկայացնել Դաշիճին, եւ անոր զործադրութիւնն ուզել :



ՍԱՆՍԱՐԵԱՆ վարժարանի խնամակալութիւնը Վսեմ. Դաբրիէլ Էֆ. Նորատունկեանի նախազանութեամբ, լուրջ խորհրդակցութիւններէ ետքը վարժարանին ներքին վիճակին մասին առնուած տեղիկութիւններու վրայ, որոշեց զրել Հո-

Արտօնատէր ՀՄԱՅՆԱԿ ԲՆՅ. ԷՐԱՆԻՍԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ԲՆՅ. ԿԵՅԻԻԲԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

Ամեն ինչից քիչագոյն եւ բազմագոյն զարգացման,
 շնորհիւ պարզ, մաքուր, խնամակալ եւ անմեղանքի:



Լ. ՊԱՆԻՍ, Սարգս-Համալ, Սոյա-Քաղաք, թիւ 16

(Հիմնադրւած 1899/ին ի Բարի)

Տ Գ Ա Ր Ա Ն Տ Ի Գ Ր Ա Ն Տ ԵՂԱՆԱԳՐԱՆ



Ֆիւզիոլոգիական կայսրութեան մէջ՝ ասա-
 ներքոյ դարուն, Ամեն Հայ կայսրութեան
 այս վէպը, անմեղու համար թէ ինչպէս
 ճշմարիտի ու ճիշդի համար Հայոցն կայսրութեան
 բոլոր ֆիզիոլոգիական աշխարհը կը ստեղծա-
 վարեն:

Այս ուղարկուած կը գրեցնի յայտնա-
 ներուն մէջ հարկ է յիշել մասնաւորապէս
 Miss Alice Stone Blackwell հոգակալ
 թարգմանութիւնը Ամենութեան «Ասպե-
 րան Երգի»:

ARMENIA արեւիկան բաժնեկիւն է՝
 մի կ'ապրէ Ամերիկայի, ապէս ու կը
 արտասանեն համար բացարձակապէս
 կանխիկ:

Դիմել՝ Editor of Armenia,
 P. O. Box 209 M. S. S.
 New York City

Ամեն աշխարհի համար ARMENIA-ի
 Յունիս եւ Յունիս համարները, որոնք
 Ամերիկայի Հանդէսի մը վայելչութիւնը
 եւ գեղեցիկ պարունակութիւնը ունեն
 կողքի զարգացմանը, յօգուածները կը
 ուսումնասիրեն մասնաւոր գրեցն-
 կութիւնը մը կ'ուսանէ ARMENIA-ն, որ
 հիմա 36 կրկններէ կը բաղկանայ փո-
 խառնակ առաջադիւն:

Ասպարիտի համար, Օգոստոսի թիւը, որ
 կը պարունակէ խոստ հետաքրքրական ու
 նշանաւոր վէպ մը «Եւրոպայի Բայի»
 խորհրդի մը Frederick Harrison-ի գր-
 ւած վէպը կը շնորհակալ զարգացման
 այս վէպը կը շնորհակալ զարգացման
 խորհրդի մը համար զարգացման զարգացման

ՄՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՎԵՀՍՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆԸ. — Գրեց Բժիշկ Սիմեոն Շահ-Նազարեանց. — Ամփոփ պատմութիւն հոգեւոյս հայրապետին կաթողիկոսական կործանելու բայց այնքան լեցուն եւ արդատաւոր գործունէութեան, եւ ամփոփում անոր հայեացքներուն՝ ի մասին հայրապետական պաշտօնին, եկեղեց. բարենորոգմանց, կաթող. Աթոռներու յարաբերութեանց, վանքերու, կրթական դրոժին, եւն. Տպագր. Մոսկուա. 1911. Գին 20 կոպիկ, Հասցէ Russie, Moscou. Armianskj per. dr. S. Schah-nazaroff :

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿ. Տ. ՄԿՐՏՉԵԱՆ, կեանքն ու գործունէութիւնը (կաթողիկոսական ընտրութիւններէ առթիւ). — Գրեց Եր. Տ. Մինասեանց, Էջմիածնի նախկին միաբան վարդապետ, մանրամասնորէն կը պատկերացնէ կաթող. կարեւոր թեկնածուներէ մէկուն՝ իր ուսուցիչին՝ կեանքը, ներկայացնելով զայն Ազգ. Եկեղեցւոյ ջերմ ու գիտակից պաշտպան, արդար եկեղեցական մը՝ ամէն կողմերով, ճշմանէն է իր ընթերցումը՝ մրաքերու լուսաբանութեան համար Գին 25 կոպէկ, Հասցէ՝ Նոն :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՂԻՆ. — Գրեց Մինաս Իսպիրեան (Սերաստիա). — Ազգին լաւագոյն ապագայ մը պատրաստելու տնկեղծ տենչով ներշնչուած հատորիկ մը, առողջ զաղափարներով, Գին մէկ ու կէս դրշ. Գինիլ Սերաստիա, Լուսաքերի կամ Ակիւնեանի գրատունները :

ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏ ԵՒ ՇԵՐԼՕՒ ՀՈՒՄՍ, (ժամանակակից պատմական մեծ վէպ), Ա. հատոր). — Գրեց Եր. Օսեան. — Հետաքրքրաշարժ վէպ, ճարտար եւ վարպետ հիւսուածքներով, Գին Ա. հատորին 6 դշ. :

Մ. ԹԱԳԻՈՐ ՊԱԼՃԵԱՆ

ՓԱԿԵՂԱԳՈՐԾ

Երկար ժամանակէ ի վեր ծանօթ է իր ճարտարութեամբ : Կը շինէ եւ կը պատրաստէ վեղեցիկ սաղաւարտներ, եւ մանաւանդ փակեղներ՝ ընտիր թափի, ասուի, սաթէն ու լիճնի եւն. վրայ Գիները գոհացուցիչ :

Գինիլ Ղալաթիա, Ս. Լուսաւորիչ եկեղեցի, ուր կը գտնուի միշտ :

5—2

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԲՆԱՐ ԵՐԳԱՐԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅ. ԱՌԱՔԵԼՍԵԱՆ Ս. ԵՒ ԴԵՅԻՈՅ

Պետրաստի

ԿՐՈՆԴԵՍ ԲՆԱՐԱՆՈՒԹԵԱՆ

Կարեւոր պակաս մը կը լեցնէ եկեղեցւոյ երաժիշտ մանուկներու համար, որոնք ասոր գործածութեամբ ա՛լ պէտք չպիտի ունենան ժամագրքի, սաղարանի, շարականի, փոխասացի եւ այլ յարակից տետրակներու եւ գիրքերու : Տէր եւ հրատարակիչ Աղեֆասեանք Եօզիասեան : Տպ. Մարգարէ, «Կիւթնպէրկ» տպարան, 1911 : Գին 7 դրշ. (մէճիա 1911) : Բօսղի ծախք 30 փրշ. :

3—3

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Տ. ՏՈՂԱՐԱՄԵԱՆ

Ուղարկւած Համալսարան-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ